«ՎԵԼՈՔՍ» Վարկային Միություն ՍՊԸ ք.
Երևան, Ազատության պողոտա 24/19, տարածք 505
Հեռ.՝ +374 (12) 241 024,
Էլ. փոստ՝ info@velox.am

«ՎԵԼՈՔՍ ՎՄ» ՍՊԸ «ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
«ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 5
«ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 7
«ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵ-ՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 9
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 10
«ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 14
ԴԻՄՈՒՄ-ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 14

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթուղթը (այսուհետ՝ «Պայմաններ» կամ «Պայմանագիր») սահմանում է «ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ- ին (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող հեռակառավարման համակարգի՝ «Սքոր Ափ» հավելվածի (այսուհետ՝ «Հավելված») օգտագործման պայմանները և Հավելվածի միջոցով որպես օգտատեր գրանցված հաճախորդին (այսուհետ՝ Օգտատեր) ֆինանսական խորհրդատվության ծառայությունների տրամադրման, այդ թվում՝ ֆինանսների արդյունավետ կառավարման, ինչպես նաև վարկային գործիքների (վարկեր, վարկային սահմանաչափեր և այլն) վերաբերյալ առաջարկների տրամադրման, Ընկերության կողմից Օգտատիրոջ կրեդիտավորման հայտի դիտարկման, Օգտատիրոջ կողմից Հավելվածի միջոցով տրամադրված համաձայնության հիման վրա տվյալների արտաքին շտեմարաններից Օգտատիրոջ անձնական տվյալների ստացման և մշակման պայմանները, ներառյալ՝ Վարկային բյուրոյում հասանելի Վարկային պատմության և Վարկային սքոր գնահատականի վերլուծության հիման վրա (բոլորը միասին՝ այսուհետ՝ Ծառայություններ):
2. Հավելվածի շահագործմամբ Ընկերությունը նպատակ է հետապնդում Օգտատիրոջ Վարկային պատմության և Վարկային սքոր գնահատականի վերլուծության հիման վրա վերջինիս տրամադրել ֆինանսական խորհրդատվություն՝ ներկայացնելով Վարկային պատմության, Վարկային սքոր գնահատականի, վարկային հարցումների վերաբերյալ տեղեկատվություն, վարկային պատմության և դրա բարելավման վերաբերյալ խորհուրդներ, օգտակար տեղեկատվության հղումներ՝ աջակցելով Օգտատիրոջը հետևել և բարելավել իր Վարկային պատմությունը և Վարկային սքոր գնահատականը, ինչպես նաև Օգտատիրոջ դիմումի կամ համապատասխան համաձայնության հիման վրա կատարել վարկարժանության գնահատում և ներկայացնել վարկային պրոդուկտների առաջարկներ:
3. Սույն փաստաթուղթն իրենից ներկայացնում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով միանալու պայմանագիր: Համաձայնելով սույն Պայմաններին (դրանում սահմանված եղանակով)՝ Օգտատերն ամբողջությամբ և անվերապահորեն ընդունում է և պարտավորվում է անշեղորեն պահպանել/կատարել սույն փաստաթղթով սահմանված բոլոր պայմանները, կարգավորումներն ու պարտավորությունները՝ ամբողջությամբ միանալով սույն Պայմանագրին՝ ներառյալ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Դիմում համաձայնությանը և Գաղտնիության քաղաքականությանը:
   Հավելվածով ընձեռնվող հնարավորություններից օգտվելու համար Օգտահաշվի գրանցմամբ Օգտատերն անցնում է նաև նույնականացման գործընթաց, որից հետո Օգտատիրոջ և Ընկերության միջև գործարար հարաբերությունները համարվում են լիարժեք հաստատված:
4. Սույն փաստաթղթում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.
   «Հավելված» Ընկերությանը պատկանող «Սքոր Ափ» ծրագրային հավելված:
   «Կողմեր» - Ընկերությունը և Օգտատերը միասին:
   «Օգտատեր» - Հավելվածում գրանցում անցած, նույնականացված և դրա արդյունքում Օգտահաշիվ ունեցող հաճախորդ:
   «Վարկային պատմություն» - համաձայն ՀՀ օրենսդրության վարկային պատմությունը/տեղեկատվությունը վարկային տեղեկատվության սուբյեկտի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկային տեղեկատվության սուբյեկտի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ

պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

«Վարկային սքոր գնահատական» կամ «ՖԱՅԿՈ սքոր» - «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ և «Ֆեյր Այզաք Սերվիսիզ Լիմիթիդ» (NYSE: FICO) ընկերությունների կողմից համատեղ մշակված սքորինգային համակարգ, որը վիճակագրական ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով հաճախորդի վարկային պատմությունը՝ տալիս է նրա վարկային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականը:

«Վարկային զեկույց» - Վարկային զեկույցը գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթուղթ է, որը պարունակում է վարկային տեղեկատվության սուբյեկտի Վարկային պատմությունը, կազմված է ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա և արտացոլում է հարցմանը նախորդող վերջին հինգ տարվա տվյալները:

«Վարկային բյուրո» - ՀՀ օրենսդրության և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա վարկային տեղեկատվության, դրա համար անհրաժեշտ այլ տվյալների հավաքման, վարկային պատմությունների մշակման, ձևավորման և պահպանման, դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն իրականացնող ընկերություն:

«Անձնական տվյալներ» - Օգտատիրոջը կամ Օգտատեր դառնալու համար Հավելվածում գրանցման գործընթացով անցնող ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ անունը, բնակության/գտնվելու վայրի հասցեն, անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, Հանրային ծառայության համարանիշը կամ Հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, կոնտակտային տվյալները, տարիքը, ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, ազգությունը, քաղաքացիությունը, անձնական և ամուսնական կարգավիճակը, ռեզիդենտությունը:

«Օգտահաշիվ» - Հավելվածի ծառայություններից օգտվելու նպատակով Օգտատիրոջ անվամբ և տվյալներով ծրագրային միջավայր, որից վերջինս կարող է օգտվել անձնական օգտագործման սմարթֆոնի կամ Հավելվածի օգտագործման համար Ընկերության կողմից պահանջվող համապատասխան տեխնիկական հնարավորություններ ունեցող այլ տեխնիկական սարքի միջոցով:

5. Ծառայությունների մատուցման ընթացքում Ընկերության կողմից Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, օգտագործման, պահպանման և բացահայտման/փոխանցման կարգի մանրամասն նկարագիրը սահմանված է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով նախատեսված «ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» վերտառությամբ փաստաթղթով:
6. Ընկերության կողմից Օգտատիրոջ վերաբերյալ Անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության ստացման, մշակման, ինչպես նաև Վարկային բյուրոյից տեղեկատվություն ստանալու համար Օգտատիրոջ կողմից տրվող համաձայնության ձևը ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ով սահմանված «ԴԻՄՈՒՄ - ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ» վերտառությամբ փաստաթղթով:
7. Հավելվածը հասանելի է բացառապես ՀՀ չափահաս գործունակ քաղաքացիների համար:
8. Պայմանագրին միանալով՝ Օգտատերը հաստատում և հավաստիացնում է հետևյալը.
   - Օգտատերը ՀՀ օրենսդրության համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ (հավաստիացնում եք, որ Ձեր 18 տարին լրացել է) օժտված անձ է, ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու է միանալ սույն Պայմանագրին, իր անունից ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ:
   - Մինչև սույն Պայմանագրին միանալը ծանոթացել է դրա բոլոր պայմաններին և դրույթներին,

ներառյալ՝ դրա անբաժանելի մասը կազմող փաստաթղթերին, համաձայն է դրանց հետ և գիտակցաբար ստանձնում է դրանցով նախատեսված բոլոր պարտավորությունները:

9. ՕԳՏԱՏԵՐԸ ՍՈՒՅՆՈՎ ԳԻՏԱԿՑՈՒՄ Է ԵՎ ՏԱԼԻՍ Է ԻՐ ԱՆՎԵՐԱՊԱՀ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝ ՀԱՐՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ «ԱՔՈՒԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ԻՆ՝ ԻՐ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵԼ ԻՐԵՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱԼԻՍ Է ԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌ ԱՅՆ, ՈՐ ՕԳՏԱՏԻՐՈՋԸ ՎԱՐԿԻ ԿԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԿԱՏԱՐԻ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՐԺԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ՈՐՊԵՍԶԻ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻ, ԱՌԱՆՑ ԻՐԵՆ ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂՅԱԿ ՊԱՀԵԼՈՒ, «ԱՔՈՒԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-Ն ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԻ ՕԳՏԱՏԻՐՈՋ ԱՌԿԱ ԵՎ ԱՊԱԳԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ: ՍՈՒՅՆ ԿԵՏԻ ՈՒԺՈՎ ՏՐՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՅԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ «ՈՒԱՅԶ» ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ, ՀՀ ԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴԻՄՈՒՄ-ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՇՎԱԾ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿՈՂ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԱԿԱՅՆ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼՈՎ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» («ԷԿԵՆԳ») ՓԲԸ-ԻՑ:

«ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

10. Հավելվածի միջոցով մատուցվող Ծառայություններից օգտվելու համար անձը Հավելվածում սահմանված քայլերի հաջորդականությամբ պետք է անցնի գրանցման գործընթացը՝ մուտքագրելով անհրաժեշտ տվյալներ և անցնելով համապատասխան նույնականացում՝ իրականացնելով քայլերի հաջորդականությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները և հաստատելով գրանցումը՝ այդպիսով գրանցելով իր Օգտահաշիվը և դառնալով Օգտատեր: Ընդ որում՝ Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել Օգտահաշիվը բացելուց և/կամ Հավելվածով Օգտատիրոջը Ծառայություններ մատուցելուց, եթե անգամ կասկածներ կան վերջինիս ինքնության և/կամ վերջինիս կողմից իրականացվող գործառնությունների օրինականության շուրջ:
11. Հավելվածում գրանցվելիս անձն էլեկտրոնային եղանակով ծանոթանում է սույն Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ դրանցով սահմանված Ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերին՝ առկայության դեպքում, Հավելվածի միջոցով Օգտատիրոջը հասանելի Ծառայություններից օգտվելու հնարավորություններին (նման նկարագրի առկայության դեպքում):
12. «Ընդունել և ստորագրել», «Համաձայն եմ», «Հաստատում եմ» կամ նմանատիպ այլ կոճակների սեղմումը, համապատասխան դաշտերում «V» կամ «X» նշանի կամ մեկանգամյա ծածկագրերի, PIN ծածկագրի մուտքագրումը, Օգտատիրոջ կողմից իր էլեկտրոնային փոստի հասցեին Հավելվածի միջոցով Ընկերությունից ստացված էլեկտրոնային նամակում համապատասխան հղման ակտիվացումը/սեղմումը նշանակում է, որ Օգտատերը կարդացել, ծանոթացել, համաձայնվել և

անվերապահորեն ու ամբողջությամբ ընդունել է սույն Պայմանագրով սահմանված պայմանները, հավաստիացումները, համաձայնությունները, Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող փաստաթղթերն ու տեքստերը, և պարտավորվում է պատշաճ և ժամանակին կատարել դրանցով նախատեսված պայմանները և պահանջները:

13. Կողմերն ընդունում են, որ Հավելվածով նախատեսված լինելու դեպքում Հավելված մուտք գործելու համար հեռախոսահամարի և գաղտնաբառի, PIN ծածկագրի, մեկանգամյա ծածկագրերի կամ այլ հաղորդագրությունների մուտքագրման, մատնահետքը և/կամ դեմքը նույնականացնելու կամ բջջային սարքի այլ ֆունկցիաների օգնությամբ այլ տվյալների մուտքագրման դեպքում Ընկերությունն իրականացնում է Օգտատիրոջ անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հնարավորություն է տալիս Օգտատիրոջն օգտվել Հավելվածից: Միաժամանակ, սույն կետով նշված եղանակներով Օգտատիրոջ կողմից Հավելվածում տրված համաձայնությունները, հաստատումները (այդ թվում՝ Ընկերության կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվելու նպատակով տրվող համաձայնությունները) համարվում են/հավասարարժեք են Օգտատիրոջ կողմից թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը և ունեն նույն իրավաբանական ուժը:

14. Օգտատերը պարտավոր է Հավելվածն օգտագործել բացառապես դրա՝ սույն Պայմանագրով սահմանված նպատակային նշանակությանը համապատասխան: Ընկերությունը հանդիսանում է Հավելվածի միակ սեփականատերը, Ընկերությանն են պատկանում Հավելվածի նկատմամբ գույքային բոլոր իրավունքների և Հավելվածի օգտագործումը Օգտատիրոջ կողմից որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես Հավելվածի կամ դրա որևէ բաղկացուցիչ տարրի նկատմամբ Ընկերության ունեցած որևէ գույքային իրավունքի փոխանցում Օգտատիրոջը: Ուստի՝ Օգտատերը պարտավոր է պահպանել Հավելվածի ծրագրային օգտագործման հետ կապված Ընկերության գույքային իրավունքները՝ բացառելով Հավելվածի կամ դրա որևէ բաղկացուցիչ տարրի կրկնօրինակում, պատճենում, ցանկացած ձևով վերարտադրում, վերահրատարակում, վերբեռնում, տեղադրում, հրապարակային ցուցադրում, կոդավորում, թարգմանություն, փոխանցում, տարածում, վաճառք, լիցենզավորում կամ այլ կերպ շահագործում որևէ այլ նպատակով, քան Հավելվածի՝ սեփական անձնական կարիքների համար սույն Պայմանագրով սահմանված նպատակային նշանակությամբ օգտագործումը:

15. Ընկերությունն ապահովում է Հավելվածի օգտագործման, ինչպես նաև Օգտատիրոջ տվյալների անվտանգությունը ժամանակակից միջոցներով: Այնուամենայնիվ, Օգտատերը սույնով անվերապահորեն ընդունում և համաձայնում է, որ Հավելվածն օգտագործում է իր ռիսկով, և Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում Հավելվածի օգտագործման հետ կապված ծրագրային խափանումների և տվյալների կորուստների, ինչպես նաև Հավելվածի ծրագրային օգտագործմամբ պայմանավորված Օգտատիրոջ տվյալների բացահայտման հետևանքով Օգտատիրոջ կրած որևէ կորստի և/կամ վնասի համար:

16. Հավելվածը Օգտատիրոջը տրամադրվում է դրա հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն է տալիս օգտվել փաստացի այդ պահին Հավելվածով հասանելի Ծառայություններից և գործառնություններից: Հավելվածով հասանելի Ծառայությունների և գործառնությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել՝ կախված Օգտատիրոջ այն սարքի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, որոնց վրա տեղադրված է Հավելվածը, ինչպես նաև կապի որակից, Ընկերության կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Ընկերության կողմից Հավելվածի միջոցով մատուցվող Ծառայությունների ցանկում ժամանակ առ ժամանակ կարող են կատարվել փոփոխություններ (ավելացումներ կամ պակասեցումներ), ինչպես նաև հնարավոր է դադարեցվի կամ կասեցվի Հավելվածին Օգտատիրոջ

հասանելիությունը՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով (ներառյալ՝Պայմանագիրը լուծելու հիմքով):

«ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

17. Պայմանագրի գործողության ընթացքում Հավելվածի միջոցով Ընկերությունն Օգտատիրոջը տրամադրում է ֆինանսական խորհրդատվություն, իսկ Ընկերության պահանջներին բավարարելու դեպքում՝ նաև վարկային պրոդուկտներ (վարկ, վարկային սահմանաչափ և այլն) ստանալու առաջարկներ:

18. Սույն պայմանագրի հիման վրա, հիմք ընդունելով նաև Օգտատիրոջ կողմից տրված համաձայնությունները, դրանց հիման վրա Օգտատիրոջ վերաբերյալ երրորդ անձանցից ստացված և/կամ Օգտատիրոջ կողմից Ընկերությանը տրամադրված տվյալները /այդ թվում՝ Անձնական տվյալները/՝ Ընկերությունն Օգտատիրոջը մատուցում է ֆինանսական խորհրդատվություն, հանդես է գալիս իր իրավասությունների շրջանակներում Օգտատիրոջը վարկային և այլ ֆինանսական ծառայությունների մատուցման առաջարկներով, որոնք սահմանված են «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով: Ընկերության կողմից Օգտատիրոջը մատուցվող ֆինանսական խորհրդատվությունը կնպաստի Օգտատիրոջ ֆինանսական գրագիտության բարձրացմանը, կլինի թափանցիկ և հասկանալի, չի պարունակի մոլորեցնող, ապակողմնորոշող դրույթներ, Օգտատիրոջ համար կապահովի բավարար տեղեկատվություն իր վարկային պրոֆիլի և վարկարժանության վերաբերյալ, կնպաստի Օգտատիրոջ կողմից իր կարիքների շրջանակներում առավել օպտիմալ որոշումների կայացմանը:

19. Հավելվածի միջոցով տրամադրվող ֆինանսական խորհրդատվությունը Օգտատիրոջ համար կրում է բացառապես կողմնորոշող բնույթ և չպետք է Օգտատիրոջ համար հանդիսանա վերջինիս կողմից ֆինանսական որոշումների կայացման միակ հիմք: Ֆինանսական խորհրդատվության շրջանակներում Օգտատիրոջը վարկային պրոդուկտներ տրամադրելու առաջարկները որևէ կերպ չեն կաշկանդում Օգտատիրոջը, և Օգտատերը ազատ է Ծառայություններից օգտվելու որոշումը կայացնելիս՝ ելնելով իր անհրաժեշտություններից և կարիքներից:

20. Սույնով Օգտատերը քաջ գիտակցում և տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ.

- սույն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Ընկերությունը կարող է պարբերաբար ուսումնասիրել, մշակել Օգտատիրոջ ֆինանսական, վարկային, Անձնական տվյալները, Օգտատիրոջը պարբերաբար տրամադրել վերջինիս վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն, իրականացնել Օգտատիրոջ վարկային պատմության բարելավման, ֆինանսական տեղեկացվածության և այլ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորել և Օգտատիրոջն ուղարկել առանձին վարկային պրոդուկտների տրամադրման առաջարկներ:
- առաջին անգամ Հավելվածում գրանցվելիս (Օգտահաշիվը գրանցելիս), ինչպես նաև հետագայում Հավելվածի միջոցով Օգտատիրոջ կողմից յուրաքանչյուր անգամ որևէ վարկային պրոդուկտի ստացման հայտ ներկայացվելիս Ընկերությունն Օգտատիրոջ վարկարժանությունը ստուգելու նպատակով կարող է իրականացնել վարկային զեկույցի հարցում Վարկային Բյուրո, ինչը կարող է նվազեցնել Օգտատիրոջ Ֆայկո սքորը կամ բացասական անդրադառնալ Օգտատիրոջ

վարկարժանության գնահատականի վրա:

- Հավելվածով Ընկերության կողմից վարկային պրոդուկտների տրամադրման առաջարկների ներկայացումը Օգտատիրոջը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես համապատասխան առաջարկով նախատեսված վարկային պրոդուկտի տրամադրման պարտավորություն, այն չի պարտադրում Ընկերությանը Հաճախորդին տրամադրել առաջարկում նշված վարկային պրոդուկտը, այլ հանդիսանում է Ընկերության զուտ նախնական պատրաստակամությունը դիտարկել առաջարկում նշված սահմանաչափի սահմաններում Օգտատիրոջը համապատասխան վարկային պրոդուկտը տրամադրելու հնարավորությունը: Ներկայացված առաջարկից օգտվելու գրավոր ցանկությունը (հայտը) Օգտատիրոջից ստանալու յուրաքանչյուր դեպքում Ընկերությունն իրականացնում է Օգտատիրոջ ներկայացրած վարկային հայտի լրացուցիչ ուսումնասիրություն և հաստատում կամ մերժում է խնդրարկվող վարկային պրոդուկտի տրամադրումը՝ Ընկերության համապատասխան իրավասու մարմնի կամ Ընկերության՝ որոշումների կայացման ավտոմատացված համակարգի որոշման հիման վրա:

21. Վարկային սահմանաչափը տրամադրվում է հետևյալ պայմաններով՝

Վարկային սահմանաչափ	Սպառողական վարկի գումարի առավելագույն չափ, որի շրջանակներում Օգտատիրոջ մոտ անհրաժեշտություն առաջանալու և վերջինիցս համապատասխան վարկավորման հայտ ստացվելու դեպքում Օգտատիրոջը կարող է տրամադրվել սպառողական վարկ

Օգտատիրոջ նկարագիր	Հավելվածում նույնականացված ակտիվ Օգտատեր, ում Օգտահաշիվը բլոկավորված, կասեցված կամ փակված չէ
Վարկային սահմանաչափի հիման վրա տրամադրվող վարկի արժույթ	ՀՀ դրամ
Հնարավոր Վարկային սահմանաչափի գումար	10 000 - 20 000 000
Վարկային սահմանաչափի ժամկետ	Սահմանվում է Օգտատիրոջ ներկայացրած վարկավորման հայտի հիման վրա՝ Ընկերության կողմից Օգտատիրոջը ներկայացված առաջարկով նախատեսված ժամկետի շրջանակներում
Ընկերությունը ցանկացած պահի միակողմանի կարող է դադարեցնել և/կամ վերանայել Օգտատիրոջը հասանելի վարկային սահմանաչափը և դրա ժամկետը:	

22. Նախքան վարկավորման հայտ ներկայացնելը Օգտատերը պետք է ծանոթանա Ընկերության կողմից առաջարկվող վարկավորման պայմաններին: Օգտատիրոջ վարկային հայտի բավարարման որոշում կայացնելուց հետո Ընկերությունը տրամադրվող վարկային պրոդուկտի պայմանների և Օգտատիրոջ կողմից տրված փաստաթղթերի հիման վրա նախքան վարկավորման պայմանագրի կնքումը Օգտատիրոջը՝ վերջինիս էլեկտրոնային եղանակով ներկայացնում է վարկային առաջարկի մասով Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 8/05-ի Հավելված 1-ի:

23. Ընկերության կողմից տրամադրվող Վարկային պրոդուկտի բոլոր պայմանները (գումարի չափը, վերադարձման վերջնաժամկետը, գումարի տրամադրման ձևը, տրամադրման եղանակը, գումարի մարման կարգը, անվանական տոկոսադրույքը (ֆիքսված կամ լողացող), տարեկան փաստացի տոկոսադրույքը, մայր գումարի և տոկոսագումարների մարման կարգը, վարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում կիրառվող տույժերի (տուգանքների) չափը և հաշվարկման կարգը, վարկի գումարի, տոկոսների, սպասարկման գումարների (առկայության դեպքում) մարման ժամանակացույցերը, միջնորդավճարները, տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման մեջ ներառվող գումարների վճարման ժամանակացույցերը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր պայմանները) կսահմանվեն համապատասխան վարկային պրոդուկտի տրամադրման պայմանագրերով/համաձայնագրերով և դրանց համապատասխան հավելվածներով:
24. Հավելվածով առանձին Ծառայությունների համար Ընկերության կողմից կարող են սահմանվել որոշակի վճարներ, որոնց մասին տեղեկատվությունը հասանելի է դարձվում Օգտատիրոջը նման Ծառայություններից օգտվելու անմիջապես առաջ, իսկ Ծառայության պարբերական մատուցման (բաժանորդագրման) դեպքում՝ Ծառայությունն ակտիվացնելիս և/կամ դրա մատուցմանն առաջին անգամ համաձայնություն տալիս կամ հաստատելիս:

«ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

25. Հավելվածի միջոցով Օգտատիրոջը մատուցվում է ֆինանսական խորհրդատվություն՝ ներկայացնելով Վարկային պատմության, Վարկային սքոր գնահատականի, վարկային հարցումների վերաբերյալ տեղեկատվություն, վարկային պատմության և դրա բարելավման վերաբերյալ խորհուրդներ և օգտակար հղումներ, հնարավորություն է տրվում ստանալ Հավելվածում հասանելի ծանուցումներ: Սույն ծառայությունը հասանելի է ինչպես բաժանորդագրության հիմքով, այնպես էլ առանց բաժանորդագրության:
26. Բաժանորդագրության ակտիվացման դեպքում տրամադրվող խորհրդատվությունը կարող է ներառել կիրառվող տվյալների պարբերական թարմացում, վարկային սքորի փոփոխությունների վերահսկում, տեղեկատվական և վերլուծական տվյալների տրամադրում, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների վերաբերյալ ծանուցումների տրամադրում: Բաժանորդագրության շրջանակում տվյալների թարմացումները կարող են իրականացվել ավտոմատ կերպով՝ առանց Օգտատիրոջ լրացուցիչ գործողության:
27. Հավելվածով հասանելի ծառայությունները, դրանց հնարավորությունները, նկարագիրը, մատուցման պայմանները և կիրառման կարգը, այդ թվում՝ բաժանորդագրության տեսակ(ներ)ը սահմանվում են առանձին ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերով և հրապարակվում են Ընկերության պաշտոնական կայքում՝ https://www.velox.am/, ինչպես նաև հասանելի են անմիջապես Հավելվածում տվյալ բաժանորդագրությունների ակտիվացման և կառավարման էջերում:
28. Հավելվածում Օգտատիրոջ Վարկային պատմության և Վարկային սքոր գնահատականի վերաբերյալ տվյալները կարող են թարմացվել Օգտատիրոջ նախաձեռնությամբ տվյալների թարմացման հարցում իրականացնելու միջոցով կամ որոշակի պարբերականությամբ՝ կախված բաժանորդագրության տեսակից և դրա համար սահմանված պայմաններից: Բաժանորդագրության առկայությունը չի նշանակում տվյալների ավտոմատ պարբերական թարմացում և թարմացման

հարցումների անսահմանափակ հասանելիություն:

29. Ծառայությունների մատուցման շրջանակում Ընկերությունն օգտագործում է արտաքին աղբյուրներից և գործընկեր կազմակերպություններից, այդ թվում՝ Վարկային բյուրոյից ստացվող տվյալներ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այդ տվյալների ամբողջականության, ճշտության, արդիականության, ինչպես նաև դրանց տրամադրման ուշացումների, ժամանակավոր անհասանելիության կամ երրորդ անձանց, այդ թվում՝ հենց Օգտատիրոջ նախաձեռնությամբ սահմանված սահմանափակումների համար:

30. Հավելվածի միջոցով տրամադրվող տեղեկատվությունը կրում է տեղեկատվական և խորհրդատվական բնույթ և չի հանդիսանում վարկի տրամադրման, վարկավորման հաստատման, վարկային սքորի փոփոխության, ֆինանսական արդյունքի կամ որևէ ֆինանսական ծառայության ստացման երաշխիք:

31. Ծառայություններից օգտվելու նպատակով Օգտատերը կարող է Հավելվածում կցել վճարային քարտ: Կցված քարտը կարող է օգտագործվել բաժանորդագրությունների, տվյալների թարմացման հարցումների և Հավելվածով հասանելի այլ վճարովի ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու համար: Ակտիվ բաժանորդագրության առկայության դեպքում Ընկերությունը կարող է սահմանափակել վերջին ակտիվ վճարային քարտի հեռացման հնարավորությունը մինչև բաժանորդագրության դադարեցումը կամ նոր վճարային քարտի կցումը:

32. Բաժանորդագրության առկայության դեպքում վճարումները կարող են իրականացվել ավտոմատ կերպով, իսկ բաժանորդագրությունը՝ ավտոմատ վերաթարմացվել մինչև Օգտատիրոջ կողմից դրա դադարեցումը: Վճարման ձախողման դեպքում Ընկերությունն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել բաժանորդագրության շրջանակում տրամադրվող առանձին հնարավորությունները կամ Հավելվածի օգտագործումն ամբողջությամբ:

33. Օգտատերն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել բաժանորդագրությունը Հավելվածով նախատեսված եղանակներով: Բաժանորդագրության դադարեցման դեպքում ավտոմատ վերաթարմացումը (renewal) դադարում է, սակայն Օգտատերը շարունակում է օգտվել համապատասխան բաժանորդագրության շրջանակում նախատեսված ծառայություններից մինչև արդեն վճարված բաժանորդագրության ժամկետի ավարտը:

34. Օգտահաշվի փակումը կամ բաժանորդագրության դադարեցումը հիմք չեն վճարված բաժանորդագրության վճարի ամբողջական կամ մասնակի վերադարձի համար, քանի որ բաժանորդագրության վճարը գանձվում է համապատասխան ժամանակահատվածում ծառայությունների մատուցման իրավունքի տրամադրման համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և առանձին ծառայությունների համար սահմանված պայմանների:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

35. Օգտատերը պարտավոր է Հավելվածում գրանցվելիս, ինչպես նաև Հավելվածից օգտվելիս տրամադրել Հավելվածի կողմից պահանջվող լիարժեք և ամբողջական տեղեկատվություն/տվյալներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության կողմից իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև հետևել Հավելվածի հրահանգներին՝ իրականացնելով անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ իր նույնականացման համար: Օգտատերը սույնով հայտարարում և երաշխավորում է, որ իր կողմից Հավելվածում տրամադրված կոնտակտային տվյալները վերահսկվում են իր կողմից, և դրանցով հնարավոր է արդյունավետորեն կապ

հաստատել իր հետ:

36. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ տրամադրած կապի միջոցներով տեղեկություններ ուղարկելու հետևանքով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ երրորդ անձանց բացահայտման համար:

37. Ընկերությունը հիմնվում է Օգտատիրոջ վերաբերյալ իր մոտ առկա կոնտակտային տվյալների վրա, և դրանցով ուղարկված ծանուցումները և տեղեկացումները համարվում են պատշաճ այնքան ժամանակ, քանի դեռ Ընկերությունը չի տեղեկացվել այդ կոնտակտային տվյալների փոփոխությունների վերաբերյալ: Օգտատերը պարտավորվում է Ընկերության պահանջով վերջինիս ներկայացնել իր փոփոխված կոնտակտային տվյալները հիմնավորող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ընկերության կողմից սահմանված ձևաչափով:

38. Հավելվածի միջոցով Օգտատիրոջ գործառնությունների մասին Ընկերությունը կարող է տեղեկացնել Օգտատիրոջն էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Հավելվածը սպասարկող ինտերնետային կայքէջերի կամ Հավելվածի համապատասխան մասում տեղեկությունները տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Հավելվածի կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Հավելվածի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Ընկերության սերվերներում և համարվում են ապացույց՝ դրանց կապակցությամբ հետագայում ծագող վեճերի կարգավորման համար:

39. Ընկերությունն իրավունք ունի արգելել և/կամ սահմանափակել Հավելվածի հասանելիությունը առանձին երկրների տարածքում:

40. Օգտատերն իրավունք չունի Հավելվածից օգտվել ինքնաշխատ կամ որևէ այլ տեսակի ծրագրային ապահովման կիրառման միջոցով (տեխնիկական համապատասխան գործիքակազմի կիրառմամբ ավտոմատացված հարցումների ուղարկում, ռոբոտների կիրառություն և այլն):

41. Ընկերությունն իրավունք ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հավելվածի կամ դրանով կատարվող գործառնությունների հասանելիությունը Օգտատիրոջը, ընդհուպ՝ լուծելով սույն Պայմանագիրը ներքոնշյալներից ցանկացածի դեպքում.

- Օգտատիրոջ կողմից Պայմանագրի պայմանները խախտելու՝ թեկուզև մեկ դեպքում,
- Օգտատիրոջ կողմից Հավելվածի չարաշահման (սույն Պայմանագրով չնախատեսված այլ նպատակներով օգտագործելու կամ այլ) դեպքում,
- Օգտատիրոջ կողմից Հավելվածի օգտագործման կանոնների խախտման կամ անվտանգության կանոնների չպահպանման կամ նման կասկածի առաջացման դեպքում,
- Օգտատիրոջ կողմից Հավելվածով զեղծարարության կամ հակաօրինական գործունեության իրականացման կամ անգամ դրա վերաբերյալ կասկածի առաջացման դեպքում,
- այն դեպքում, երբ Ընկերությունը հիմքեր ունի ենթադրելու, որ Հավելվածն օգտագործվում է երրորդ անձի կողմից,
- Հավելվածում գրանցվելիս կամ դրանից օգտվելիս Օգտատիրոջ կողմից ոչ արժանահավատ տեղեկատվություն տրամադրված լինելու դեպքում,
- Օգտատիրոջ կողմից Հավելվածը ոչ անձնական նպատակներով օգտագործվելու դեպքում,
- անվտանգության ապահովման նկատառումներով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

42. Օգտատիրոջ կողմից Պայմանագրի լուծման առաջարկ ներկայացնելու դեպքում այն կարող է ակցեպտավորվել Ընկերության կողմից կամ մերժվել՝ Ընկերության հանդեպ Օգտատիրոջ

պարտավորությունների առկայության և/կամ Պայմանագրի լուծման անհնարինության այլ դեպքերում: Սույնով Օգտատերը հավաստում է, որ տեղյակ է և անվերապահորեն համաձայնում է, որ Պայմանագրի՝ որևէ հիմքով լուծման դեպքում Օգտատիրոջն անհասանելի են դառնում Օգտահաշիվը և դրանում առկա տեղեկատվությունը:

43. Սույնով Օգտատերը հավաստում է, որ տեղյակ է և անվերապահորեն համաձայնում է, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ընկերությունն իրավունք ունի սեփական հայեցողությամբ ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարել սույն Պայմանագրում՝ այդ մասին նախապես՝ առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելով Օգտատիրոջը՝ ծանուցումը տեղադրելով Հավելվածի համապատասխան բաժնում և էլեկտրոնային եղանակով՝ Օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցումն ուղարկելու միջոցով: Փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Օգտատիրոջ կողմից Հավելվածի օգտագործումը շարունակելը նշանակում է, որ Օգտատերն անվերապահորեն ընդունել է և համաձայնվել փոփոխված պայմաններին:

44. Օգտատերը իրավունք ունի սեփական հայեցողությամբ ցանկացած ժամանակ ցանկություն հայտնել միակողմանի դադարեցնել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նույնականացված և վավերականացված էլեկտրոնային եղանակով օգտահաշիվը փակելու հայտ Ընկերությանը ներկայացնելու միջոցով:

45. Օգտատերը պարտավոր է խստիվ պահպանել Հավելված մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Հավելվածն օգտագործելիս այլ անձանց կողմից իր Օգտահաշիվ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար, ինչի համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում:

46. Կողմերի միջև սույն Պայմանագրից բխող հաղորդակցությունը, ներառյալ՝ ցանկացած տեղեկատվության, հաղորդագրության, փաստաթղթերի, ծանուցումների, քաղվածքների, հաշվետվությունների ներկայացում, փոխանցում, փոխանակում, այդ թվում՝ ցանկացած հաղորդակցում կապված Պայմանագրից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ, կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ Օգտատիրոջ կողմից Հավելվածում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Հավելվածի միջոցով:

47. Սույն Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

48. Պայմանագրի և դրանից ծագող հարաբերությունների նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ օրենսդրությունը: Պայմանների շուրջ ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է ՀՀ «Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին» օրենքով սահմանված կարգով:

49. **Արբիտրաժային վերապահում.**

Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են արբիտրաժային կարգով՝ բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, գործը հանձնելով «ՕՊՏԻՄՈՒՍ ԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մշտապես գործող արբիտրաժային դատարանին (այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան): Կողմերը հավաստում են, որ սույն ընտրությունը կատարվել է իրենց կամքով՝ առանց որևէ ուղղորդումների և/կամ պարտադրանքի, և այդ կապակցությամբ հրաժարվում են հետագայում սույն կետով նախատեսված փաստերը վիճարկելու իրենց իրավունքից:

- Արբիտրաժային դատարանում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանի կանոնադրությանը և

Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը տեղակայված է «ՕՊՏԻՄՈՒՍ ԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության www.optimuslex.am պաշտոնական ինտերնետային կայքում: Սույնով Կողմերը հավաստիացնում են, որ ծանոթ են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Արբիտրաժային դատարանի կանոնադրությանը և կանոնակարգին, ինչպես նաև դրանցով սահմանված իրենց իրավունքներին և պարտականություններին:

- Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է վեճի ծագման պահին գործող Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճերի քննությունն իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի: Վեճերը լուծվում են ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, Արբիտրաժային դատարանի վայրն է՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևանը»:
- Կողմերը գիտակցում են, որ Արբիտրաժային դատարանի վճիռը լինելու է վերջնական, ենթակա չի լինելու բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կողմերը պարտավորվում են հետագայում չշահարկել և չվիճարկել այդ փաստի վերաբերյալ իրենց տեղեկացվածության հանգամանքը:

50. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Օգտատիրոջ կողմից դրան միանալու պահից: Օգտատերը Պայմանագրին միանում է Պայմանագրով սահմանված կարգով Հավելվածում իր Օգտահաշիվը գրանցելով, Հավելվածով պահանջվող նույնականացումն անցնելով և Հավելվածով սահմանված Ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ համաձայնությունները տալով:

51. Սույն Պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի նորմատիվային իրավական ակտերի փոփոխությունները, որոնք կտարածվեն սույն Պայմանագրի պայմանների վրա, պարտադիր են Կողմերի համար:

«Վելոքս» ՎՄ ՍՊԸ «ՍՔՈՐ ԱՓ» հավելվածի օգտագործման և դրա միջոցով վարկայինսահմանաչափի և ֆինանսական խորհրդատվության տրամադրման հիմնական պայմաններ դրույթների
Հավելված 1

«ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Գաղտնիության քաղաքականությունը նկարագրում է՝ ինչպես է «Վելոքս ՎՄ» ՍՊԸ-ն («Ընկերություն», «մենք», «մեր», «մեզ») իր ծառայություններից, այդ թվում՝ բջջային հավելվածից («Հավելված») կամ այլ առցանց համակարգերից ու հարթակներից («Համակարգ») օգտվելիս հաճախորդների («հաճախորդ», «օգտատեր», «դուք», «ձեր», «ձեզ») վերաբերյալ հավաքագրում, օգտագործում, պահպանում և բացահայտում/փոխանցում տեղեկատվությունը: Քաղաքականությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ՝ սահմանելով տեղեկատվության գաղտնիության հաճախորդի իրավունքները և դրանց պաշտպանության իրավական կարգավորումները:

Օգտագործելով Հավելվածը՝ Դուք համաձայնում եք սույն քաղաքականությամբ սահմանված պայմաններին:

1. **Հավաքագրվող տվյալներ.**

Մենք կարող ենք հավաքագրել հետևյալ տեղեկատվությունը՝

Անձնական տվյալներ. Ներառում է Ձեր անունը, ազգանունը, հասցեն, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տվյալներ, կոնտակտային տվյալներ և ցանկացած այլ տեղեկատվություն, որը Դուք տրամադրում եք հավելվածում գրանցվելիս կամ որը կիրառվում է Ձեզ նույնականացնելու համար, ինչպես նաև Հավելվածի կամ Համակարգի օգտագործման տվյալներ: Մենք կարող ենք իրականացնել Ձեր կողմից տրամադրված տվյալների խաչաձև ստուգում երրորդ կողմերի, այդ թվում՝ տվյալների հանրային շտեմարանների հետ:

Ֆինանսական տվյալներ. Մենք կարող ենք հավաքագրել տեղեկատվություն Ձեր վարկային պատմության, այդ թվում՝ ֆինանսական պարտավորությունների, տրամադրված երաշխավորությունների, սքոր գնահատականների և ֆինանսական գործարքների վերաբերյալ՝ իրականացնելու համար առավել ճշգրիտ գնահատում, հաշվարկներ և տրամադրելու անհրաժեշտ ծառայություններ և խորհրդատվություն:

Սարքի վերաբերյալ տվյալներ. Մենք կարող ենք հավաքագրել տեղեկատվություն Հավելվածից կամ Համակարգից օգտվելիս կիրառվող սարքի և ինտերնետային դիտարկիչի վերաբերյալ, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Ձեր բջջային սարքի տեսակը, սարքի եզակի նույնացուցիչը (ID), որը վերագրվել է այդ սարքին արտադրողների կողմից, սարքի օպերացիոն համակարգը, սարքի ապարատային (hardware) և ծրագրային (software) ապահովման տվյալները, IP հասցեն, Ձեր սարքի այլ նույնացուցիչները /identifiers/, դիտարկիչի /browser, բրաուզեր/ տեսակը, դիտարկիչի տարբերակը, ինչպես նաև այն էջերի վերաբերյալ տվյալներ, որոնք Դուք այցելում եք, այդ թվում՝ Ձեր այցելության ժամը և ամսաթիվը, այդ էջերում անցկացրած ժամանակը: Կարող է հավաքագրվել տեղեկություն նաև տեսախցիկի, տեղադրված հավելվածների և սարքի հիշողության հզորության վերաբերյալ:

Տեղակայման վայրի վերաբերյալ տվյալներ. Մենք կարող ենք հավաքագրել տեղեկատվություն Ձեր սարքի տեղակայման վայրի, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ GPS-ի և օգտագործողի սարքի տեղադիրքի վերաբերյալ այլ տվյալներ, և այն պահպանել մեր սերվերային համակարգերում՝ երաշխավորելու համար Ձեր օգտահաշվի և տվյալների անվտանգությունը:

2. Տվյալների օգտագործում.

Մենք օգտագործում ենք Ձեր անձնական և ֆինանսական տվյալները՝ Ձեզ նույնականացնելու, Ձեր վարկային սքոր գնահատականի և վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվության ստացման, ֆինանսական խորհրդատվության տրամադրման, Ձեզ հետ կապ հաստատելու, առաջարկվող պրոդուկտների, ծառայությունների և այլ առաջարկների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու և Հավելվածի ծառայությունների որակի բարելավման նպատակով՝ տվյալների վերլուծությամբ, Հավելվածի օգտագործման միտումների բացահայտմամբ և արդյունավետության գնահատմամբ:

Սարքի վերաբերյալ տվյալներն օգտագործվում են Հավելվածի կատարողականության (performance) օպտիմիզացման, հաճախորդների փորձառության բարելավման, ինչպես նաև օգտագործողների տվյալների անվտանգության ապահովման նպատակով:

Սույնով Դուք համաձայնում եք, որ մեր կողմից մեր տեխնոլոգիաների միջոցով հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը վերլուծվի: Մենք կարող ենք գնահատել Ձեր վարկային սքոր գնահատականն ու վարկային պատմությունը՝ Ձեզ ավելի հարմար ծառայություններ առաջարկելու և խորհրդատվության մատուցման նպատակով:

Մեր վարկային գնահատման համակարգի մտավոր սեփականությունը պետք է պահպանվի միայն մեր կողմից, և մենք կարող ենք լիազորել մեր գործընկերներին օգտագործել այս վարկային գնահատման համակարգը: Դուք չեք կարող ունենալ որևէ պահանջ Հավելվածի միջոցով վերբեռնված ցանկացած տեղեկատվության, տվյալի և փաստաթղթի օգտագործման նկատմամբ, և դրանք կարող են օգտագործվել, պատճենվել, տարածվել և պահպանվել մեր կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել նաև Մեր որոշ կամ բոլոր ակտիվների միաձուլման, զիջման, վերակազմավորման, լուծարման վաճառքի կամ փոխանցման նպատակով՝ որպես գործունեության շարունակություն:

3. Տվյալների փոխանցում.

Մենք չենք փոխանցում կամ բացահայտում Ձեր անձնական տվյալները երրորդ անձանց առանց Ձեր համաձայնության, բացառությամբ հետևյալ դեպքերի.

Ծառայություն մատուցողներ. Մենք կարող ենք Ձեր տվյալները տրամադրել երրորդ կողմ հանդիսացող ծառայություն մատուցողներին, որոնք օժանդակում են Հավելվածի ֆունկցիոնալության տրամադրմանն ու բարելավմանը:

Իրավունքների փոխանցում/զիջում. Ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել մեկ այլ ընկերության մեր իրավունքների զիջման կամ մեր Ընկերության ակտիվների ցանկացած վաճառքի, միաձուլման, բիզնեսի ամբողջ կամ մի մասի ֆինանսավորման կամ ձեռքբերման հետ կապված բանակցությունների ընթացքում:

Իրավական համապատասխանություն. Մենք կարող ենք տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկատվությունը, եթե այն պահանջվում է օրենսդրությամբ, կարգավորմամբ կամ իրավական գործընթացով:

4. Տվյալների պաշտպանություն և անվտանգություն.

Մենք ձեռնարկում ենք անհրաժեշտ անվտանգության միջոցառումներ պաշտպանելու համար Ձեր տվյալները չարտոնված հասանելիությունից, փոփոխությունից, բացահայտումից կամ ոչնչացումից:

Ձեր տրամադրած բոլոր տվյալները պահվում են ապահով սերվերների տվյալների բազայում և պաշտպանված են գաղտնաբառերով: Դրանք հասանելի են միայն սահմանափակ քանակությամբ անձանց, ովքեր համակարգերի հասանելիության հատուկ իրավունքներ ունեն և պարտավոր են պահպանել նշված տեղեկությունների գաղտնիությունը:

5. Տեղեկանիշների («Cookie») օգտագործում.

«Cookie»-ները փոքրացված տեքստային ֆայլեր են գրառումների պահպանման համար, որոնք լինում են ընթացիկ և կայուն: Ընթացիկ տեղեկանիշները դիտարկչի փակումից հետո չեն պահպանվում, իսկ կայուն տեղեկանիշները պահպանվում են համակարգչի կոշտ սկավառակի վրա երկար ժամանակ: Տեղեկանիշների գրանցման ֆունկցիան կառավարելի է օգտատերերի կողմից և կարող է անջատվել կամ արգելափակվել բրաուզերում:

Համակարգի կողմից «Cookie»-ներն օգտագործվում են օգտատիրոջ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, և դրանք միացված թողնելը թույլ կտա Ընկերությանը բարելավել Համակարգի հարմարավետությունն ու արդյունավետությունը: Դրանք թույլ են տալիս ավտոմատ եղանակով հավաքագրել տվյալներ Ընկերության կայքում Ձեր առցանց գործունեության, այդ թվում՝ հղումների սեղմման, վեբ էջերի դիտարկման և որոնումների վերաբերյալ:

6. Տվյալների հեռացում կամ փոփոխություն.

Դուք իրավունք ունեք դիմել Ընկերությանը.

- Ստանալու հասանելիություն, ուղղելու կամ հեռացնելու Ձեր անձնական տվյալները,
- Հրաժարվելու գովազդային հաղորդակցություններ ստանալուց,
- Անջատելու սարքի կամ բրաուզերի որոշակի գործառույթներ, որոնք օգտագործվում են տվյալների հավաքագրման նպատակով կամ կիրառմամբ:

7. Երեխաների տվյալների գաղտնիություն.

Մեր Հավելվածը կամ Համակարգը նախատեսված չէ 18 տարեկանից ցածր անձանց համար, և մենք գիտակցաբար չենք հավաքագրում երեխաների անձնական տվյալներ:

8. Քաղաքականության փոփոխություն.

Մենք կարող ենք թարմացնել Քաղաքականությունը՝ արտացոլելու մեր գործընթացների և գործառույթների, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունները:

Դուք կտեղեկացվեք Քաղաքականության էական փոփոխությունների վերաբերյալ Հավելվածի կամ այլ միջոցներով, այդ թվում՝ փոփոխված Քաղաքականության հրապարակմամբ մեր ինտերնետային կայքում:

Խորհուրդ է տրվում պարբերաբար ուսումնասիրել այս Քաղաքականությունը՝ փոփոխությունների վերաբերյալ իրազեկված լինելու նպատակով:

Քաղաքականության փոփոխությունն ուժի մեջ է մտնում Հավելվածում, Համակարգում և/կամ ինտերնետային կայքում հրապարակվելուց/տեղադրվելուց հետո:

«Վելոքս» ՎՄ ՍՊԸ «ՍՔՈՐ ԱՓ» հավելվածի օգտագործման և դրա միջոցով վարկային սահմանաչափի և ֆինանսական խորհրդատվության տրամադրման հիմնական պայմաններ դրույթների
Հավելված 2

ԴԻՄՈՒՄ - ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես, գրանցվելով «Վելոքս» ՎՄ ՍՊԸ «Սքոր Ափ» հավելվածում (այսուհետ՝ Հավելված), սույն համաձայնության տրամադրման համապատասխան պատուհանում սեղմելով «Հաստատել» կոճակը և անցնելով քայլերի հաջորդականությամբ սահմանված նույնականացման գործընթացով, այդ թվում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթը՝ սույնով դիմում եմ «Վելոքս» Վարկային Միություն ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ֆինանսական խորհրդատու/Վարկատու) Հավելվածում գրանցման միջոցով ինձ իմ վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի բարելավման վերաբերյալ ֆինանսական խորհրդատվության մատուցման, վարկային գործիքների (վարկեր, վարկային սահմանաչափեր և այլն) վերաբերյալ առաջարկների տրամադրման խնդրանքով, ինչի կապակցությամբ սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունն առ այն, որպեսզի.

1. «ՎԵԼՈՔՍ» Վարկային Միություն ՍՊԸ-ն (հասցե՝ ք. Երևան, Ազատության պողոտա 24/19 շենք, թիվ 505 տարածք) (վերջինիս կողմից իմ հետ կնքվելիք վարկային պայմանագրից ծագելիք պահանջի իր իրավունքները երրորդ անձի զիջվելու կամ Վարկատուի կողմից երրորդ անձին նման առաջարկով հանդես գալու դեպքում՝ նաև նշված երրորդ անձը, որը ցանկանում է Վարկատուին ներկայացնել կնքվելիք վարկային պայմանագրից բխող Վարկատուի պահանջի իրավունքը ձեռք բերելու առաջարկ, հանդիսանում է Վարկատուի հետ համագործակցող, ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպություն և ունի օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հանրային շտեմարաններից հարցումներ կատարելու իրավասություն (այսուհետ Վարկատուի հետ միասին անվանվելով Ծառայություն մատուցող)), առանց ինձ տեղեկացնելու հարցումներ կատարի և ստանա տվյալներ/տեղեկություններ.
   1.1. ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրից, «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և/կամ այլ վարկային բյուրոներից իմ ինչպես ֆինանսական, հարկային պարտավորությունների, հարկային հաշվետվություններում ներառվող ցանկացած այլ տվյալների վերաբերյալ տեղեկություններ, նաև այլ տվյալներ, այնպես էլ՝ այլ պարտավորությունների վերաբերյալ, որոնք կարող են առնչվել ինձ հետ վարկային, երաշխավորության կամ այլ պայմանագրի կնքման կամ այլ ծառայությունների մատուցման վերաբերյալ որոշում կայացնելիս կամ առաջարկ ներկայացնելիս, ընթացիկ մոնիտորինգ կատարելիս, ինչպես նաև տվյալ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի ընթացքում ցանկացած պահի:
   1.2. «ՈՒԱՅՁ» բարեկեցության տեղեկատվական համակարգերի ձեռնարկություն հիմնադրամից՝ իմ ներկա և անցյալ աշխատանքային գործունեության մասին, այդ թվում՝ ստացածս վարձատրության և այլ եկամուտների չափի և իմ կողմից վճարված հարկերի չափերի մասին:

1.3. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից (ԷԿԵՆԳ):

1.4. ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից (անձը հավաստող փաստաթղթի տվյալները՝ տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերականության ժամկետը և տրամադրող մարմինը, դրանում նշված քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, սեռը, մահացած է, մահացած չէ, մահվան ամսաթիվը, ՀԾՀ-ն/չունենալու վերաբերյալ տեղեկանք, քաղաքացիությունը, ինչպես նաև բնակության/հաշվառման վայրի հասցեն և լուսանկարը):

1.5. ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից (Ակտի համար (ամբողջական), ակտի տեսակ, ակտի համար, գրանցման ամսաթիվ, գրանցող բաժանմունք, վկայականի համար, վկայականի ամսաթիվ, երկրորդ վկայականի համար, երկրորդ վկայականի ամսաթիվ, նույնականացման համար, հայտը, դիմողի տվյալներ, հոր/ամուսնու/մահացողի տվյալներ, կնոջ/մոր տվյալներ, երեխայի տվյալներ, ծնողներ, քույրեր և եղբայրներ, երեխաներ, ամուսնու տվյալներ, այլ նյութեր, փոփոխված ակտի տվյալներ, ազատ նշումներ, բնակության վայրերի լրիվ ցանկ, կից նյութեր, մահվան մասին տեղեկություններ, վկաներ և ցանկացած այլ տեղեկատվություն):

1.6. ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայությունից (ԱՏՄ շարժիչի հզորություն/ձիաուժ, ԱՏՄ գույն, ԱՏՄ VIN համար, Փաստաթղթի համար, ԱՏՄ հաշվառման համարանիշի տեսք, ԱՏՄ թափքի տեսակ, ԱՏՄ կարգավիճակ՝ հաշվառված է, հանված է, Սեփականության վկայականի համար, Պետ. Հաշվառման վկայականի համար, ԱՏՄ տեսակի խումբ, ԱՏՄ մոդել, Տարանցիկ համարանիշ, Հատուկ նշումներ, ԱՏՄ թողարկման տարեթիվ, ԱՏՄ հաշվառման ամսաթիվ, ԱՏՄ շարժիչի համար, ԱՏՄ մակնիշ, ԱՏՄ կարգավիճակ, Կիրառված սահմանափակումներ, Գրավադրման մասին ցանկացած տեսակի տվյալ, Հաշվառված անձի մասին ցանկացած տեսակի տվյալ, Սեփականատիրոջ մասին ցանկացած տեսակի տվյալ, Ապահովագրման մասին ցանկացած տվյալ, Վարորդական իրավունքի վերաբերյալ ցանկացած տվյալ, Անձի հասցեի նկարագրի վերաբերյալ ցանկացած տվյալ) և ցանկացած այլ տեղեկատվություն:

1.7. ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից՝ (Ոստիկանության ԻԿ օպերատիվ տեղեկատվություն՝ բազայում հայտնաբերված անձանց ցուցակը, ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, ID քարտ):

1.8. ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից բոլոր տեսակի կատարողական վարույթների (Վարույթի կոդ, Մուտքի ամսաթիվ, Հարուցման ամսաթիվ, Բնույթ, Պարտապանի անուն/անվանում, Պարտապանի հասցե, Բռնագանձման գումարի չափ, Կատ. Ծախսի գումարի չափ, Հայցի ապահովման գումարի չափ, Վարույթի մնացորդ, Կատ. Թերթի ամսաթիվ, Կատ. Թերթի համար, նախկին համար, Կատ. Թերթի պահանջ, նախկին պահանջ, եթե ընթացիկ չէ, ապա ինչ հոդվածով է փոփոխված, Փոփոխման ամսաթիվ, Վարույթի վիճակ, ժամկետների և դրանց կատարման կամ չկատարման վերաբերյալ):

1.9. ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից (աշխատավայրի ՀՎՀՀ, վճարված եկամտային հարկ, վճարված կուտակային, կենսաթոշակային վճարներ, աշխատած ժամերի քանակ, Անձի եկամուտների վերաբերյալ տվյալներ, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի

համար, անուն, ազգանուն, հայրանուն, գործատու/ներ/ի վերաբերյալ տեղեկատվություն, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (գումարի չափ, արժույթ), կազմակերպության հասցե, կազմակերպության անվանում, զուտ եկամուտ (գումարի չափ, արժույթ), պաշտոն/ներ/ի վերաբերյալ տեղեկատվություն (պաշտոնի անվանում և կոդ, պաշտոնավարման սկիզբ և ավարտ), քաղաքացիաիրավական հարաբերությունների սկիզբ և ավարտ, քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում վճարված եկամուտներն (գումարի չափ, արժույթ), անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար, անձը հաստատող փաստաթղթի տեսակը):

1.10. Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակից՝ (Գույքահարկի վերաբերյալ տեղեկատվություն, տրանսպորտային միջոցներ և անշարժ գույքեր, գույքին առընչվող անձանց տվյալների բաղադրիչներ, անձնագիր, ID քարտ, բիոմետրիկ անձնագիր, վճարման հաշվեհամար, հարկի վճարման ամսաթիվ, ՀԾՀ, անուն ազգանուն հայրանուն, տրանսպորտային միջոցների և անշարժ գույքերի գույքահարկ, գույքահարկի տարի (տույժի պարտք, տույժի գումար), տրանսպորտային միջոցի և անշարժ գույքի համար սահմանված գույքահարկի պարտք, գույքահարկի գումար, տրանսպորտային միջոցներին առընչվող տվյալների բաղադրիչներ (նույնականացման համար (VIN), արտադրող, միջոցի մոդելը, պետական հաշվառման վկայագրի համարը, ժամանակահատվածի ավարտ, արտադրության տարեթիվ, շարժիչի հզորություն (ձիաուժ), ժամանակահատվածի սկիզբ, հաշվառման համարանիշ, գույքի տեսակ, գույքահարկի տարի (տարի, գերավճար), անշարժ գույքերին առընչվող տվյալների բաղադրիչներ (տվյալների ստուգում, Ժամանակահատվածի ավարտ, հողի օգտագործման նպատակ, ժամանակահատվածի սկիզբ, գույքի տեսակ, կառույցի օգտագործման նպատակ, հողի կադաստրային ծածկագիր, կառույցի կադաստրային ծածկագիր)):

1.11. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ վերջինիս մոտ պահվող, ինձ վերաբերող ցանկացած տվյալների/տեղեկատվության մասին:

1.12. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից և ՀՀ Միասնական սոցիալական ծառայությունից իմ սոցիալական կարգավիճակի, սոցիալական կարգերի, ստացած կենսաթոշակների վերաբերյալ տեղեկատվություն և այլն,

1.13. ՀՀ նոտարներից, ՀՀ նոտարական պալատից և ստանա տեղեկատվություն նոտարական կարգով վավերացված և իմ կողմից ստորագրված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն,

1.14. ՀՀ կադաստրի կոմիտեից և ստանա տեղեկատվություն ինձ սեփականության իրավունքով պատկանող, այդ թվում՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի, իմ գույքային իրավունքների, դրանց ծագման հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն, դիմի և ստանա սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք, կադաստրային գործից ստանա սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ փաստաթղթերի պատճենները և այլն,

1.15. ՀՀ այլ պետական կամ ոչ պետական մարմիններից/կազմակերպություններից՝ վերջիններիս մոտ պահվող, ինձ վերաբերող ցանկացած տվյալների/տեղեկատվության մասին:

2. Ֆինանսական խորհրդատուն/Վարկատուն իմ վերաբերյալ ստացած վերոնշյալ 1-ին կետում նշված բոլոր տվյալների/տեղեկությունների հետ կատարի դրանց մշակման հետ կապված ցանկացած գործողություն (ներառյալ՝ հավաքագրում, ամրագրում և օգտագործում), ինչպես նաև տրամադրի դրանք երրորդ անձի (բանկային և/կամ վարկային գործունեության լիցենզիա ունեցող անձ կամ ֆոնդ)՝ իմ և Ֆինանսական խորհրդատուի/Վարկատուի միջև Հավելվածի օգտագործման, ինչպես նաև հնարավոր ծագելիք այլ իրավահարաբերություններից, այդ թվում՝ վարկային, բխող պահանջի իր իրավունքները նշված երրորդ անձին զիջելու հնարավորությունը բանակցելու նպատակով: Ստացված տվյալների/տեղեկությունների մշակումը և այլ անձանց տրամադրումը/փոխանցումը կարող է իրականացվել նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

3. Ֆինանսական խորհրդատուն/Վարկատուն, ինձ խորհրդատվության մատուցման, ինչպես նաև այլ գործիքների, այդ թվում՝ վարկային, տրամադրման առաջարկներ անելու նպատակով, տվյալ պայմանագրի կամ առկա այլ պայմանագրային/գործարար հարաբերությունների գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց ինձ տեղեկացնելու, հարցումներ կատարի վերոնշյալ 1-ին կետում նշված բոլոր մարմիններին/անձանց և ստանա նույն կետում նշված տվյալները/տեղեկությունները:

Սույնով նաև հավաստում եմ, որ սույն դիմում-համաձայնությունը կիրառելի է.

1) իմ վարկունակությունը և վարկի տրամադրման նպատակահարմարությունը որոշելու համար իմ վերաբերյալ վերոնշյալ տվյալները/տեղեկատվությունը ստուգելու, ինչպես նաև խորհրդատվության մատուցման պայմանագրի, վարկի տրամադրումից հետո վարկի գործողության ողջ ժամանակահատվածում այդ տվյալները/տեղեկատվությունը (այդ թվում՝ վարկային զեկույցը) թարմացնելու նպատակներով, ընթացիկ մոնիտորինգի նպատակով, ինչպես նաև այլ ծառայությունների առաջարկի նպատակով,
2) իմ և Ֆինանսական խորհրդատուի/Վարկատուի (վերջինիս կողմից իմ հետ կնքվելիք պայմանագրից, , այդ թվում՝ վարկայինծագելիք պահանջի իր իրավունքները երրորդ անձի զիջվելու դեպքում՝ նաև նշված երրորդ անձի) միջև հարաբերությունների գոյության ամբողջ ժամանակահատվածի համար:

Ծանոթացել եմ վարկային պատմությանը և վարկային սքոր գնահատականի էությանը և դրա կարևորությանը, կիրառվող սքորի տեսակներին, սքորի վրա ազդող հիմնական գործոններին և տեղեկացված եմ, որ «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին կարող են կատարվել հարցումներ համաձայն ներքոգրյալ աղյուսակի, որոնք կարող են ազդեցություն ունենալ իմ վարկային ամփոփ գնահատականի (սքորի) /օրինակ՝ ֆայկո սքոր/ վրա.

Վարկային հարցման նպատակ և ժամկետ	Ազդեցությունը վարկային սքորի վրա	Հարցման պարբերականություն
Նոր վարկային հայտի դիտարկման ընթացքում՝ նոր վարկային դիմում*	**Նվազեցնում է**	**Մեկանգամյա**
Վարկային պայմանագրի գործողության ընթացքում՝ գործող վարկի մոնիտորինգ**	**Չի ազդում**	**Պարբերաբար**
Գործող	**Չի ազդում**	**Պարբերաբար**

պայմանագրային/գործարար հարաբերությունների գործողության ընթացքում՝ այլ ծառայությունների առաջարկ ☒Այո ☐Ոչ		
***Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է նոր վարկային հայտի դիտարկման համար:** ****Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է վարկի տրամադրման և հետագա սպասարկման համար:**		

4. Տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ Ֆինանսական խորհրդատուի/Վարկատուի կողմից (վերջինիս կողմից իմ հետ կնքվելիք վարկային պայմանագրից ծագելիք պահանջի իր իրավունքները երրորդ անձի զիջվելու դեպքում՝ նաև նշված երրորդ անձինք)

1) Իմ անձնական տվյալները կարող են փոխանցվել համապատասխան պետական իրավասու մարմիններին և այլ իրավաբանական անձանց «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
2) Պայմանագրի 1-ին և 3-րդ կետում նշված հարցումները կատարվեն անսահմանափակ ինձ հետ գործարար հարաբերությունների շրջանակներում նախատեսված կարգով և դրանց գործողության ամբողջ ժամանակահատվածում
3) Համագործակցող /Վարկատուին ծառայություններ մատուցող/ Վարկատուի համար աշխատանքներ կատարող լոկալ և արտասահմանյան կազմակերպություններին տրամադրվի իմ վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները, որոնք օգտագործվելու են բացառապես Վարկատուի կողմից տվյալ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով ինձ ծառայություններ մատուցելու նպատակով:

Հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված այլընտրանքային կարգավորման շուրջ համաձայնության գալու հնարավորությունը՝ սույնով տալիս եմ իմ անվերապահ և անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ եթե հետագայում անձնական տվյալներիս մշակման համաձայնությունը իմ կողմից գրավոր կերպով հետ կանչվի, ապա մինչ հետկանչն ստանալու օրը Ծառայություն մատուցողի մոտ առկա իմ անձնական տվյալները միևնույն է կպահպանվեն և չեն ոչնչացվի, սակայն Ծառայություն մատուցողն այլևս իրավունք չի ունենա հավաքագրել/թարմացնել իմ մասին նոր անձնական տվյալներ: Սույնով հավաստում և հաստատում եմ, որ քաջ գիտակցում եմ, որ անձնական տվյալներիս հետագա մշակման և/կամ դրանց թարմացման հնարավորությունից զրկված լինելով՝ Ծառայություն մատուցողը կարող է մասնակի կամ ամբողջությամբ միակողմանիորեն դադարեցնել ինձ հետ ունեցած գործարար իրավահարաբերությունները (լուծելով ինձ հետ կնքված համապատասխան պայմանագրերը/համաձայնագրերը), ինչի բոլոր բացասական հետևանքները (ներառյալ՝ Ծառայություն մատուցողի հանդեպ իմ ունեցած վճարային պարտավորությունների վաղաժամկետ կատարման իմ պարտավորությունը) գիտակցում և ընդունում եմ:

Սույն դիմում-համաձայնությունը կարդացել եմ, այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և

ընդունելի է: Լիովին գիտակցում եմ, որ Հավելվածի համապատասխան պատուհանում «Հաստատել» կոճակը սեղմելու պահից սույն դիմում-համաձայնությունը համարվում է պատշաճ ձևով տրված ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ և 454 հոդվածի 4-րդ կետերի պահանջներին համապատասխան, ինչի հիման վրա անմիջապես ծագում են սույն դիմում-համաձայնությամբ նախատեսված բոլոր իրավունքները և պարտականությունները:

Սույն համաձայնությունը տրված է էլեկտրոնային եղանակով «Սքոր Ափ» հավելվածի միջոցով: